



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առևտ նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



ԵՐԱՎՈՐ

ԳՐԱԿԱՆ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

Հ. 412

ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
ՖԻԶԻԿԱՅԻ ՏԵՍԱԿԵՏԻՑ

1884

№ 13—14

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅՈՐՈՎԱՆ



Ա. Վ. Խ Ե

ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

ՓԻԶԻԿԱՅԻ ՏԵՍԱԿԵՏԻՑ

Առաջարկելիք բարգմանը՝ Ա. ԲԱԲԱՆՅԱՆ



1934
ԳԵՂԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԿՎԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԻՎԱՆ



Գառ. խմբագիր Արա Խանջյան. Տեխնիկական խմբագիր Հ. Տեր-Դավթյան. Համահնակ
և արտադրության 10/XI 1984 թ. Ստորագրված և տպվելու 25/XI 1984 թ. Առաջ-
Փորձառ Ա. 5 148x210 Մակար 1,75 մատմալ. Գլավին 5064 (Բ). Հրատ. 3:18.

Պատումը 5064. Տիրած 8.000

Типография им. Стакин 1902 г. АЧУПП Ростов-Дон.

Ինձ առանձնապես մեծ ուրախություն և պատճառում այն հանքամանքը, վոր յես կարող եմ այստեղ, ձեր առաջ հանդես գալ զուտ տեսական ֆիզիկային վերաբերող հարցերի մասին և նույնական շոշափել նրանց նշանակությունը իմացության տեսության մեջ։ Այդ բանում յես տեսնում եմ հետաքրքրություն զեղի մաքուր ֆիզիկան, — հետաքրքրություն, վոր յես սրտանց վողջունում եմ. ինձ ուրախացնում ե այն, վոր մարդիկ, վորոնք զբաղվում են տեխնիկայով, այսինքն վորոնք մշակում են ֆիզիկայի կիրառությունները, հետաքրքրվում են նաև այնպիսի ինդիրներով, վորոնց լուծումն առայժմ վճչ մի տեխնիկական կիրառություն ունենալ չի կարող։ Մենք, ֆիզիկոսներս, բարձր ենք գնահատում տեխնիկայի հաջողությունները և շատ լավ գիտենք, թե մեր աշխատանքը վորքան ե թեթևանում այն ամենով, ինչ տալիս է տեխնիկան. բայց, բնականաբար, մենք չենք կարող շուրախանալ յերբ տեխնիկներն իրենց հերթին համոզվում են, վոր ֆիզիկան միայն այն ժամանակ է առաջ գնում, յերբ նա զարգանում է վորպես գիտություն։ Սակայն ընության յերեսույթների ֆիզիկական ըմբռնումը միշտ առանձին իմացական արժեք է ներկայացնում, իսկ այդ հանդամանքը բավականություն է պատճառում մարդուն և, ինչպես արվեստը, բարձրացնում է նրան առորյակյանքից։

Հարաբերականության սկզբունքի մասին ձեզ պատմելու, բավականությունը փոքր ինչ նսեմանում ե այն իրողությամբ, վոր այդ ուսմունքն իր եյական մասերում հանրամատչելի կերպով շարադրվել չի կարող։ Յես նույնիսկ կարող եմ պնդել, վոր ֆիզիկոսների մեջ անգամ միայն շատ քչերն են այնքան լավ տիրապետում հարաբերականության տեսությանը, վոր կարող են ինքնուրույն կերպով դատել նրա մասին։ Իրերի այս դրության մեջ յես վոչ մի լավ բան չեմ կարող սպասել այն բազմաթիվ զեկուցումներից և հոդվածներից, վորոնք նպատակ ունեն համա-

պատասխան գիտական պատրաստություն չունեցող մարդկանց
ըսցառութել հարաբերականության սկզբունքը:

Սակայն, յեթե յես համոզված եմ, վոր միանգամայն հանրա-
մատչելի դասախոսությունների միջոցով հարաբերականության
սկզբունքը բացատրելու փորձերը միայն կարող են խառնաշփո-
թություն առաջ ընթառ մարդկանց մտքերում, ապա, իհարկե, յես
և չպետք և փորձեմ անել այն, ինչ իմ պարագն եմ համարում
անթույլարելի համարել այստեղ: Յես հենց սկզբից պետք է
դուրս չգամ վորոշ զրջանակներից և նպատակ չդնեմ իսկապես
բացարել ձեզ հարաբերականության սկզբունքը: Յես կուղնայի
միայն, վորքան կարելի յես, պարզ ձևով բացարել ձեզ, թե ինչ-
պես հանգեցին հարաբերականության տեսությանը, ինչ կարող ե տալ նու և
ինչ իմացական արժեք կարելի յե վերագրել նրան:

Հարաբերականության տեսությունը, բոլոր մյուս Փիզիկական
տեսությունների նման, փորձի արդյունք եւ Անմիջական դիտողի
համար բացարձակ շարժման գաղափարի մուծումը, վոր հարաբե-
րական չեւ ուրիշ մարմինների նկատմամբ, անպայմանուրեն ան-
հրաժեշտ մի բան չի թվում: Սակայն արդին դասական մեխանի-
կան ոգութում և բացարձակ տարածության գաղափարով, վորի
նկատմամբ տեղի յեն ունենում մարմինների շարժումները: Այդ
հետեւնք և վերլուծական յերկրաչափության կիրառությունը, ուր
կետերի զիրքը վորոշվում եւ այն հեռավորությունների ողնու-
թյամբ, վոր նրանք ունեն տարածության մեջ ամրացված կոոր-
դինատային սիստեմից: Բայց բացարձակ գատարկ տարածության
մեջ կոորդինատային գծեր ամրացնել հնարավոր չեւ: Ուստի ան-
հրաժեշտ և յենթապրել թե տարածության մեջ մի մարմին գո-
յություն ունի, վորի նկատմամբ հաշվվում են բոլոր մնացած մար-
մինների դիրքերը: Այդպիսով գեռ շատ վաղուց այն տեսակետն
եր տարածված, թե, չնայած բացարձակ շարժման գաղափարի
մուծմանը, մեխանիկայում կարող են դիտվել միայն հարաբերա-
կան շարժումները: Սակայն ինդիքն այլ կերպ եր լույսի նկատ-
մամբ, սկսած այն ժամանակից, յերբ լույսի ալիքային տեսու-
թյունն անհրաժեշտ դարձեց ընդունել եթերի՝ այն հատուկ մի-
ջավայրի՝ գոյությունը, վոր լույսի ալիքների կը դո՞ւ ե հանդիսա-
նում: Պարզ էր, վոր բացարձակ շարժումը տարածության մեջ
լուսային եթերի նկատմամբ կատարելապես կարող եր Փիզիկա-
կան նշանակություն ունենալ, վոր այդպիսի բացարձակ շարժում
փորձով հաստատել կարելի պիտի լիներ: Այդ նպատակով բազմա-

թիվ փորձեր կատարվեցին, բայց միշտ բացասական արդյունքով:
Նրանցից ամենահայտնին Մալիկիսնի փորձն եւ:

Յերկրի շարժմանը զուգահեռ ընթացող լույսի ճառագայթն
ընկնում եւ նրա նկատմամբ 45°-ի թեքությամբ դրված ապակե
թիթեղի վրա և մասամբ անցնում եւ նրա միջով, իսկ մա-
սամբ ել անդրադառնում՝ յերկրի շարժման նկատմամբ 90°-ի անկ-
յան տակ: Ազգբնական ճառագայթի այս յերկու մասերն անդրա-
դառնում են իրենց ճանապարհին դրված հայելիներից և նորից
ընկնում ապակե թիթեղի վրա, ուր կրկին միանում են իրար
հետ եւ, վորպես մի ճառագայթ՝ զնում են դեպի դիտողը: Յեթե
լույսի ճառագայթի յերկու մասերը յերկրի անշարժության դեպ-
քում անցնենու լինելին միատեսակ ճանապարհներ, ապա յերկրի
շարժման ժամանակը այդ ճանապարհները կրագարեն միատեսակ
լինելուց: Դրանում հեշտ եւ համոզվել մի պարզ հաշվի ոգնությամբ,
վոր կատարելապես նման է Զինոնի հանրածանոթ այն խնդրին,
թե արագուն Աքիլեսը վորքան շուտ եւ կարողանում համեն դանդաղաշարժ կրիային: Կրիայի գերն այստեղ կատարում եւ հա-
յելին, վոր կապված եւ յերկրին, իսկ Աքիլեսի գերը՝ լույսի ճա-
ռագայթը, վոր հետապնդում եւ հայելուն: Յեթե ընդունինք, վոր
եթերը դանդաղաշարժ կատարում եւ հանդիսա վիճակում, ապա դրա անխուսափելի
հետևությունը կլինի այն, վոր լույսի ճառագայթի յերկու մա-
սերի ճանապարհները տարբեր մեծություն կունենան: Ճշմարիտ
եւ, այդ տարբերությունը կախված եւ յերկրի և լույսի արագու-
թյունների հարաբերության քառակուսուց միայն, այսինքն՝ մեկ
տասմիլիոններորդական կարգի մեծություն եւ, բայց այդ վերին
աստիճանի փոքր մեծությունը, այնուամենայնիվ, հնարավոր ե
դիտել: Դրա համար պետք եւ այնպես անել, վոր ճառագայթի
յերկու մասերն ինստերֆերենց տան իրար հետ, վորովհետեւ այդ-
պիսով ալիքի յերկարության այնպիսի մասեր կարելի յեւ չափել,
վորոնք կազմում են միլիմետրի հազարերորդական մասի կեսը:
Յեթե ճառագայթի յերկու մասերի ճանապարհները մեկական
մետրի յեն հավասար, ապա պարզվում եւ, վոր հնարավոր եւ հայ-
տարբերել այն խիստ աննշան մեծությունները, վորոնց մասին
խոսվում եւ այստեղ:

Մայկելսոնի փորձի բացասական արդյունքը հանդիսանում
եւ այն փորձնական իրողությունը, վորի վրա հիմնված եւ հարա-
բերականության տեսությունը, Այդ փորձը հարաբերականու-
թյան տեսության համար նույն նշանակությունն ունի, ինչ նշա-
նակություն վոր ունեցավ *perpetuum mobile*-ն եներգիայի պահ-

պանության որենքի համար, կամ յերկրորդ կարգի perpetuum
տօնելու ն թերմոդինամիկայի յորկրորդ որենքի համար: Վերջին
յերկու որենքների հայտաբերման պատմությունը շատ ընդհա-
նուր բան անի հարաբերականության տեսության ծավաման հետ:
Փորձի միջոցով աստիճանաբար պարզվում և մի վորեն մասնավոր
յերեվույթ ստանալու անկարելիությունը, իսկ հետազայտմ այդ
միջնույն անկարելիությունը ճանաչվում և վորագես հետանքը
բնության ավելի ընդհանուր նշանակություն ունեցաղ որենքի:

Բնության որենքները սահմանելիս մենք պետք նրանց մեջ
դանազանենք յերկու տեսակ որենքներ. առաջին՝ վորոնք արգեն-
գոյություն ունեցող որենքների սոսկ ընդլայնումն և ընդհանրա-
ցումն են հանդիսանում, յերկրորդ՝ վորոնցով վերանում են մի
շարք պարզ և մինչ այդ ճիշտ համարվող յենթադրություն-
ներ: Եներգիայի պահպանության որենքն առաջին ախարի որենք-
ներից և, իսկ թերմոդինամիկայի յերկրորդ որենքը յերկրորդ
ախարի որենքներից: Այն պահից սկսած, յերբ Լեյբնիցը սահմանեց
կենդանի ուժի գաղափարը, եներգիայի պահպանության որենքը
հայտնի դարձավ մեխանիկայի մեջ, և Ռոբերտ Մեյթի Հելմինցի
ու Լմասլի մատուցած ծառայությունը միայն այն և, վոր նրանք
մեխանիկայի համար, այդ ճիշտ որենքը տարածեցին նաև ամբողջ
ֆիզիկայի վրա: Սակայն, յեթե այդպիսով պարզվեց, վոր perpetuum
տօնելու անհնարին և, այսինքն՝ անկարելի յեներգիա-
ծախսել առանց համապատասխանաբար լրացնելու այն, ապա դրա
հետ միասին կարիք չեղավ հրաժարվելու մինչ այդ ֆիզիկական-
դիտությունների սեփականությունը դարձած և ֆիզիկայի հիմ-
նաբարերից մեկը համարվող վորեւ և բանից:

Գործն այլ ընթացք ունեցավ ջերմության մեխանիկական տե-
սության յերկրորդ որենքի համար: Այն պնդումը, թե անկարելի-
յեկառուցել յերկրորդ կարգի մի perpetuum տօնել, վորի ոգ-
նությամբ հնարավոր լինի առանց վորեւ և սահմանափակման չեր-
մային եներգիան վերածել ոգտակար աշխատանքի, առաջին հա-
յացքից շատ նման և թվում եներգիայի պահպանության որեն-
քին: Սակայն մանրազննին հետազոտությունը ցույց տվեց, վոր
յերկրորդ կարգի perpetuum տօնել-ի հնարավորությունը բա-
ցասող այս յերկրորդ որենքը յենթադրում և, այսպես կոչված,
անշրջելի (անհակագարձելի) պրոցեսների գոյությունը: Բայց բո-
լոր ֆիզիկական յերեվույթների մեջ ժամանակի շրջելիությունը
հանդիսանում եր ամբողջ ֆիզիկայի ներառյալ և ելեկտրոմագնի-
սական յերևույթների ամենաընդհանուր և հիմնական որենքներից

մեկը։ Յերբ հետազայում անշրջելիության գաղափարը հանգեց մոլեկուլային շարժման անկանոնությանը, և ֆիզիկայի մեջ խիստ պատճառականության տեղը զրավեց ստատիստիկան (վիճակագրական մեթոդը — Խմբ.), այն ժամանակ շատերին թվաց, թե այդ հանդիսանում ե ֆիզիկայի ամենակարևոր հիմունքների զոհաբերություն։

Ամեն անգամ, յերբ մի նոր տեսության համար զոհաբերվում է մինչ այդ գոյություն ունեցող վորևե հիմնական որենք, միշտ հարց և ծագում, ոգուտն և արդյոք ավելի մեծ, թէ մնասցւ թերմոդինամիկայի յերկը որենքի նկատմամբ այս հարցը վաղուց արգեն լրւծված և նրա (յերկը որենքի — Խմբ.) ոգտին։

Նյութի մոլեկուլային և ատոմական կառուցվածքի մեջ ներթափանցելու համար՝ ֆիզիկան հրամայնական կարիք ունի վիճակագրական մեթոդների կիրառմանը, առանց այդ մեթոդների անկարելի կլիներ տեսականորեն տիրապետել այդ ամբողջ բնագավառին։ Այն նշանակությունը, վոր ֆիզիկայում ստացել են մոլեկուլների մեջ կամ ատոմների միջև տեղի ունեցող յերևույթները, ցույց տվեց հավանականության տեսության մեթոդների բացառիկ կարեռը նշանակությունը։ Այդ առանձնապես վերաբերում է քվանտների նոր տեսությանը, վոր կանգնած և այն տեսակետի վրա, թե բնության որենքները ճիշտ են միայն վիճակագրականորեն, այսինքն՝ ճիշտ են չափաղանց շատ առանձին ատոմների փոխազդեցության դեպքում, մինչդեռ բնության առանձին աարերերի համար խական կարևոր որենքները, մեծ մասամբ զետ անհայտ են մեզ։

Քանի վոր եներգիայի պահպանության որենքը մեխանիկական և ելեկտրոդինամիկական որենքների հետևությունն ե, ապա առաջ և գալիս եր հետևանքներով չափաղանց կարեռը մի հարց՝ արդյոք այդ որենքն ել զուտ վիճակագրական բնույթ չունի։ Չի կարելի ժխտել, վոր գոյություն ունի վիճակագրության չափաղանց մեծ գերակշռության վտանգ և վոր տեսական ֆիզիկայի վերջնական նպատակը, այսինքն իրերի պատճառական կապակցության իմացությունը անհրաժեշտ չափով ուշադրության առարկա չի գտառնում։

Հարաբերականության տեսությունն ևս պահանջում ե, վոր մինչ այժմ կատարելապես ճիշտ համարվող մի շաբաթ գրույթներ մոռացության տրվեն։ Այսպես, որինակ, Մայկելսոնի փորձի բացասական արդյունքը բացատրելու համար հարաբերականության տեսությունն ստիպված և յենթադրել, թե պինդ մարմնի յեր-

կարությունը կախում ունի նրա արագությունից, ընդ վորում
այդ կախումը կարող է նկատել միայն հանգիստ վիճակում զբա-
նվող դիտողը: Հենց սա յև այսպես կոչված յերկարության կո-
րենցյան կրծառաւմը, վորի կողմից առաջին անդամ մացվեց մաս-
շաաբների այն միանգամայն առանձնահատուկ հարաբերակա-
նությունը, վորը հետագայում այնքան մեծ դեր խաղաց հարա-
բերականության տեսության մեջ: Զի կարելի ժխտել, վոր նման
դրույթները վորոշ չափով արհեստական բնույթ են կրում և
հակառակ մեր սովորական մտածելակերպին: Ակամա հարց ես
տալիս, թե ինչու բնությունն այդքան ամուր և կառչում հարա-
բերականությանը, յեթե նրան այդ գեղքում այնքան արհեստա-
կան պրիմիներ են հարկավոր:

Ենթե ընդունենք, վոր հանգիստ գրության մեջ գտնվող դի-
տողի համար շարժվող մասշտաբն իրոք կարճանում ե, ապա Մայ-
կելսոնի փորձը հնարավոր և բացատրել գրա համար յերկարու-
թյան կարճացումն ընտրվում ե այնպես, վոր փորձի արդյունքը
բացասական լինի: Սակայն մասշտաբի յերկարության կախումն
արագությունից դեռ բավական չե հավասարաշափ շարժումների
նկատմամբ հարաբերականության սկզբունքն ստանալու համար:
Ժամանակի չափումն ևս պետք է կախում ունենա՞արագությունից
և անշարժ դիտողի համար ժամացույցն այլ ընթացք պետք ե
ունենա, յեթե նա (ժամացույցը—իմբ.) շարժման մեջ է գտնվում:
Այս յենթազրությունն անհրաժեշտ ե անել այն բանի համար,
վորպեսզի հնարավոր չինի բացարձակ շարժման գոյությունը
հաստատել այնպիսի դիտողություններով, վորոնք կատարվում են
ժամանակի մոմենտները ցույց տվող աղդանշանների միջոցով:

Չնայած այնքան տարրինակ դրույթներ մուծելուն, ինչպի-
սին և մասշտաբի յերկարության և ժամացույցի ընթացքի կա-
խումը տարածության մեջ շարժումից, — հարաբերականության
տեսությունը, վորը կոչվում ե մասնավոր տեսություն, ճշմարիտ
և համարվում շատ շատերի կողմից, վորովետեւ նա հաստատվում
է փորձով: Միայն բացարձակ շարժումն ապացուցելու անկարե-
լիությունը չե, վոր խոսում ե նրա ոգտին: Խիստ արագ շարժվող
ելեկտրոնների վրա կատարված դիտողությունները նույնպես հա-
մաձայն են այդ տեսության հետ:

Նման արդյունքների հասնելու համար կարելի յե տեսությունը
կառուցել հետեւյալ ձևով. պահանջել վոր բնության ըոլոր որենք-
ները շարժվող սիստեմում սխատեմի հետ միասին շարժվող դիտողի
համար՝ տեղի ունենան այնպես, ինչպես անշարժ սիստեմում՝

հանդիսատ վիճակում գտնվող պիտողի համար: Այս պայմանի իրառ դրծումը կազմված և մակապված մաթեմատիկական վորոշ ուղերացիաների հետ, վորոնք վերջին հաշվով միանգամայն ընդհանուր ձևով հանդումնն շարժման աղեցությունը Փիզիկական յերևույթուրի վրա հաստատելուն:

Հարաբերականության այս տեսության խիստ կարևոր հետեւություններից մեկն ևս հանդիսանում է այն, վոր հնարավոր չեղիտել լույսի արագությունից ավելի մեծ արագություն: Մաշտարի յերկարության կարծացումն այնպես և տեղի ունենում, վոր, յերբ նրա արագությունը ձգտում է հավասարվել լույսի արագությանը, նրա յերկարությունը դառնում է անվերջ փոքր մեծություն: Իսկ յեթե այդ արագությունն ավելի մեծ դառնար, քան լույսի արագությունը, այն ժամանակ պիտի ստացվեր բացասական յերկարություն, վոր Փիզիկական խմաստից գուրկ եւ:

Յեթե ծանր մարմին շատ մեծ արագություն են ուզում հազորդեց ապա լույսի արագությունն այստեղ յերկան և զալիս այն բանում, վոր մարմին արագությանը վորեն վորոշ աճ տալու համար այնքան ավելի մեծ աշխատանք է պահանջվում, վորքան մարմին արագությունը մոտ և լույսի արագությանը: Այդպիսով մի արագություն ունեցող մարմին վրա ուժն այնպես և ազդում, ինչպես նա ազդում և փոքր արագության և մեծ մասսա ունեցող մարմին վրա: Մասսան դառնում և արագության ֆունկցիա, ինչպես այդ հաստատվեց Յ ճառագայթների վրա կատարված դիտություններով: Հարաբերականության տեսության մեջ լույսի արագությունն անսահման մեծ արագության դեր և խաղում:

Հարաբերականության տեսության հետագա հետեւությունն այն է, վոր այլև չի կարող տեղի ունենալ յերկու արագությունների զումարումը՝ զուգահեռակողմի կանոնով: Մեր սովորական պատկերացման համաձայն, յեթե յերկու արագություններ նույն ուղղությունն ունեն, ապա նրանք ավելանում են իրար վրա պարզ գումարման միջոցով: Բայց այժմ այդպես վարվելն այլև ճիշտ չի լինի, հակառակ զետքում լույսի արագությունից փոքր յերկու արագություններ գումարվելով կարող են տալ լույսի արագությունից ավելի մեծ արագություն: Ուստի արագությունները պետք են գումարվեն այնպես, վոր լույսի արագությունից մեծ արագություն չստացվի:

Հարաբերականության տեսության խիստ կարևոր և խորը նշանակություն ունեցող հետեւություններից մեկն եւ հանդիսանում է այն, վոր եներդիան ել մասսայի նման ողեաք և ոժտաված

լինի իներցիայով։ Այս վերին աստիճանի նշանակալից արդյունքը կարելի յէ բացատրել հետեւյալ պարզ յեղանակով։ Եներգիան պատկերացնենք մեզ ճառագայթման ձեռվ, այսինքն՝ այնպես, վոր նա կապված չե մատերիայի հետ։ Թող այդ եներգիան ճառագայթվի տարածության մեջ մի վորեւ միակ մարմնի կողմից՝ վորեւ վորով ուղղությամբ։ Այդ ճառագայթումը ճնշում և այն մարմնի վրա, վորից նա հեռանում և և, այդպիսով, շարժման մեջ և գնում նրան ճառագայթման հակառակ ուղղությամբ։ Այդ յեղանակով կարելի կլիներ բացարձակ շարժում հայտաբերել բնության մեջ և չափել այդ շարժումը։

Իսկ յեթե մենք ճառագայթող եներգիային մասսա վերաբերնք, ապա տվյալ դեպքում այլևս գործ չենք ունենա բացարձակ շարժման հետ, վորովինետե ճառագայթումը (վոր ընթանում և մի ուղղությամբ) և մարմինը (վոր շարժվում և նրան հակառակ ուղղությամբ) իրար նկատմամբ կշարժվեն վորպես յերկու մարմիններ։ Նշանակում և եներգիային պետք և վերաբերել իներտ մասսա, վորի մեծությունը հավասար և եներգիային՝ բաժանած լույսի արագության քառակուսու վրա։ Սրանից հետեւում և, վոր եներգիան և մասսան չի կարելի տարբերել իրարից։ Տարածության մեջ այնտեղ, ուր եներգիա կա, կա և համապատասխան քանակությամբ իներտ մասսա, և վոչինչ չի խանգարի մեզ յենթադրելու, թե գոյություն ունի միայն եներգիա, վորը նյութի առամների մեջ պետք և գտնվի խիստ համակենտրոնացած վիճակում։

Պարզվեց, վոր բնության որենքներն ըստ այս հարաբերականության տեսության մաթեմատիկորեն ձևակերպելին՝ տարածության և ժամանակի չափությունը ձևականորեն հանդես են դալիս կատարելապես միատեսակ կերպով, յեթե միայն այն դեպքում ժամանակը բազմապատկելու լինենք մինուս մեկի քառակուսի արմատով։ Հենց շարադրման այս յեղանակն եւ, վորտեղ էեղծ ժամանակը տարածության մեջ խաղում և չորրորդ չափման դերը ամենայն հավանականությամբ հանդիսացավ առաջին խթանը, վոր ավելի լայն ուղադրության առարկա դարձրեց հարաբերականության տեսությունը։ Թվում եր, թե չորրորդ չափման միատիկան այստեղ յերեսն և գալիս Փիզիկական իմացման (ԽօՏ-ԽԱՎԱԿԱԾ) պայծառ լույսի մեջ։ Բայց վորքան ելքիարևոր լինեն այն առընչությունները, վորոնք հայտաբերված են հարաբերականության տեսության կողմից ժամանակի և տարածության միջև, այսուամենայնիով այստեղ չի կարելի չմատնանշել, վոր տվյալ դեպքում խոսքը վերաբերվում է ամենից առաջնորդ ձետ-

կան կապին, մի հանգամանք, վոր հաստատվում և թեկուղ այն բանով, վոր այնտեղ զիչ թե ժամանակն ինքն և դեր խաղում, այլ միայն կեղծ ժամանակը: Վոչ հարաբերականության տեսությունը և վոչ ել մի վորեւ այլ տեսություն չեն կարող վոչ մի փոփոխություն մտցնել այն իրողության մեջ, վոր ժամանակը ներկայացնում և ինչ վոր բոլորովին այլ բան, քան չափելի տարածությունն եւ

Հարաբերականության այսպիս կոչված մասնավոր տեսությունը, վոր կիրառելի յե հաստատուն արագություն ունեցող շարժումների նկատմամբ, ինչպիս տեսանք եյական փոփոխություններ և մացրել ֆիզիկական հիմնական գաղափարների և պատկերացումների մեջ: Ըստ այսմ հարաբերականության սկզբունքը յես կանվանեյի վոչ այնքան ֆիզիկական սկզբունք, վորքան իմացության տեսության սկզբունք, վորովհետև նա կառուցվում և այն նախադրյալի հիման վրա, թե մարդն ի վիճակի չպետք և լինի բացարձակ շարժումը հայտարերելու: Մաքուր ֆիզիկայից բղխող որենքները պետք և միայն մոտավորապիս ճիշտ համարել, մեր գիտելիքների զարգացման հետ միասին նրանք փոխարինվում են ավելի ճիշտ որենքներով: Այդ բանը մենք տեսնում ենք եներգիայի պահպանության որենքի մեջ, արագությունների գումարման սկզբունքի մեջ, Դոպլերի սկզբունքի մեջ և այլն: Բայց հավանականության տեսությունը հավակնություն ունի բացարձակ կերպով ճիշտ լինելու և չի կարող դիտել վորպիս առաջին մերձեցում գեպի իրականությունը: Ամեն մարդ կհամաձայն վիր այն մտքի հետ, վոր հարաբերականության սկզբունքը, վորպիս մոտավորապիս ճիշտ մի սկզբունք, անհեթեթություն լլիներ:

Sit ut est aut non sit ταρδόφωνος λαρελι յε τηρθωδել նաև հարաբերականության սկզբունքի նկատմամբ: Շնորհիվ այն հանգամանքի, վոր մինչև այժմ փորձը և հարաբերականության սկզբունքը կատարելապիս համաձայն են իրար հետ, հարաբերականության սկզբունքը, համարյա, ընդհանուր հավանություն և գըտել բոլորի կողմից: Այն իրողությունը, վոր հարաբերականության սկզբունքի ոգնությամբ կարելի յե ամենաընդհանուր ձևով արտածել շարժման ազդեցությանը, անտարակույս նշանակալից հաջողություն և նրա համար:

Սակայն այնուամենայնիվ ժխտել չի կարելի, վոր հարաբերականության տեսության յետևում ծածկվում են մի շարք հեռանկարներ, վորոնք մինչ այդ տեսության ասպարեզ գալը հնարավոր եյին: Լույսի արագությունը, վորով տարածվում են ելեկ-

տրումակնիսական ալիքները տարածության մեջ, այլևս չի կարելի հանգեցնել այլ զիտելի մեծություններին Եթերը, վոր պատկերացվում եր վորպիս ելիկարումազնիսական ալիքների կրողը, այստեղ անպետք ե դասանում, Վերացտական մեծությունները, ինչպես ելիկարական և մազնիսական ուժերը, տարածության մեջ պետք ե տարածվեն լույսի արագությամբ: Ինձ միանդամայն կասկածելի յե թվում, թե այս հարցում վերջին խոռոքն և ասվում: Եթերի գաղափարը նորից Փիզիկայի մեջ մտցնելու ձգումը ճառագայթման տեսության մեջ նոր ուժ և ստանում: Սակայն, յեթե մենք նորից եթերի հետ գործ ունենանք, ապա այլևս վոչ մի կերպ չենք կարող չկասկածել այն մասին, թե շարժումը նրանկատմամբ չի կարող Փիզիկական նշանակություն չունենալ:

Մինչդեռ հարաբերականության մասնավոր տեսությունը համարյա ընդհանուր հավանություն և գտնել գիտության մեջ, հարաբերականության՝ այսպես կոչված՝ ընդհանուր տեսության շուրջը մի այնպիսի վեճ բռնկվեց, վորի նմանը, հավանաբար, ուրիշ անզամ չի յեղել գիտության պատմության մեջ: Այդ վեճը կատարելապես զուրս յեկավ զիտության շրջանակներից և փոխազդվեց քաղաքական ու դոդմատիկ հողի վրա, ըստ վորում, նա տեղի յեր ունենում նման դեպքերի համար պատշաճ կատաղությամբ:

Եեթե դեռ ևս հարաբերականության մասնավոր տեսությունը վերացական մտածողության այնպիսի բարձր պահանջներ և առաջադրում, վոր անհնարին և դաւնում նրա հանրամատչելի շարադրությանը, ապա հարաբերականության ընդհանուր տեսության համար այդ նույն բանը նշմարիտ և ավելի մեծ չափերով:

Մինչդեռ հարաբերականության մասնավոր տեսությունը սահմանափակվում է սոսակ այն պնդումով, թե բացարձակ և հավասարաշափ շարժումն անապացուցելի յե բնության մեջ, — մի պընդում, վոր հաստատվում է փորձով, — հարաբերականության ընդհանուր տեսությունը ձգտում է հաստատել այդ նույն պընդումն ամեն տեսակի շարժման նկատմամբ: Բայց վերջին յենթադրությունը չի հաստատվում փորձով: Ընդհակառակը, մեր տրամադրության տակ կան վորոշ ոժանդակ միջոցներ, վորոնք թույլ են տալիս մեզ հայտնաբերել որինակ՝ յերկըի պատույտը նաև՝ առանց անշարժ աստղերի ովնությանը դիմելու: Այդպիսի միջոցներ են՝ Յուլիսի ճոճանակը և զիտոսկոպիկ կողմացույցը: Իսկ յեթե հակառակ այս բանի հարաբերական և համարվում նաև յերկըի շարժումը, ապա պետք է վորոշ, հատկապես

տվյալ դեպքի համար կառուցված յենթաղբություններ անել, այդ դիտողությունների արդյունքները բացատրելու համար, իսկ այդ հանդիսանում ե հարաբերականության ընդհանուր տեսության եյական թերությունը: Նրա մի այլ թերությունն այն ե, վոր սկզբունքի մաթեմատիկական ձևակերպությունը, վոր այնքան հասարակ ու պարզ ե հարաբերականության մասնավոր տեսության մեջ, այստեղ հանդում ե մի շարք պոտուլատների, վորոնք կարելի յե, բայց ամենին անհրաժեշտ չե ընդունել:

Հարաբերականության ընդհանուր տեսության համար յելակետ ե հանդիսանում այն յենթաղբությունը, թե արագացող շարժումը, այսինքն՝ այն շարժումը, վոր փոփոխական արագություն ունի, կարող ե փոխարինվել ծանրության ուժի համապատասխան ներգործությամբ: Այս ճանապարհով իրոք վոր հնարավոր ե լինում հարաբերականության նման մի բանի հանդել: Յեզ իսկապես, յեթե այդպես ընդունենք, ապա այն ժամանակ հնարավոր չի լինի զանազանել, թե մի վորոշ ազդեցություն ստացվում ե վորպես հետևանք արագացող շարժման թե վորոշ մասսաների ձգողական ուժի: Յեզ սակայն հարաբերականության ընդհանուր տեսությունը վորոշակի զանազանվում ե մասնավոր տեսությունից: Ըստ վերջին տեսության բացարձակ շարժում ընդհանրապես հնարավոր չե դիտել: Սակայն պտտման ժամանակ այնուամենայնիվ ինչ վոր բան նկատվում ե, և ըստ հարաբերականության ընդհանուր տեսության անորոշ ե մնում՝ պտտական շարժմամբ պետք ե լինի այդ, թե ծանրության ուժի ազդեցություն:

Հարաբերականության մասնավոր տեսության եյական հետեւ վություններից մեկը հանդիսանում ե այն, վոր եներգիան պետք ե ոժաված լինի նյութի իներտ հատկություններով, այնպես վոր ամրող նյութը կարող ե դիտվել վորպես մարմինների մեջ պարփակված եներգիայի հսկայական պաշարների կուտակում: Յեթե այսպիսով, եներգիան և մասսան չի կարելի տարրերել իրարից, ապա հետագա հետեւությունն այն պետք ե լինի, վոր եներգիայի վրա պետք ե ներգործի նաև ծանրության ուժը: Յեթե արագացող շարժման ազդեցությունը կարող ե կատարելապես փոխարինվել ձգողության ուժով, ապա սրանից անհրաժեշտաբար հետևում ե եներգիայի ձգողական ազդեցությունը:

Դիցուք, յերկու մարմիններ, վորոնք սկզբում հանդիսատվիճակում են գտնվել, արագացում ստանալով՝ միենույն արագությունն են ձեռք բերում: Թող միաժամանակ այդ մարմիններից

մեկը մի վորոշ եներգիա ճառագայթի, վոր կլանվում և մյուս
մարմնի կողմից: Թանի վոր ճառագայթում արագացող շարժման
ժամանակ և տեղի ունենում, ապա կլանվող եներգիայի քանակը¹
մեծանում է, վորովհետև կլանող մարմինը, բացի իր վրա ընկնող
եներգիայից, կլանում և նաև այն ճառագայթման եներգիան,
վոր գտնվում և իր անցած տարածության մեջ: Եներգիայի ճիշտ
այդպիսի փոփոխություն ստացվում և նաև այն ծանրության
ուժի հետեւանքով, վոր փոխարինում և վերը հիշված արագաց-
մանը, յեթե մարմինները գտնվում են հանդստի վիճակում և
յեթե ճառագայթման միջոցով աեղափախվող եներգիային վերա-
գրվում և ծանրության հատկությունը:

Այն յենթադրությունը, թե ծանրության ուժն ազդում և նաև
եներգիայի վրա անտարակույս բաղմաթիվ փառերը ունի իր
ողակին, յեթե միայն կանգնենք հարաբերականության մասնավոր
տեսության հողի վրա:

Հարաբերականության տեսությունը բարը տեսակի շարժում-
ների վրա տարածելու փորձը կատարելիս՝ խկույն հանդիպում
ենք չափաղանց բարդ մետրական առնչությունների: Ամենա-
պարզ կերպով կարելի յե համոզվել այդ բանում այնպիսի մի
մարմնի որինակի ոգնությամբ, վոր պտտվում և իր առանցքնե-
րից սեկնումնեկի շուրջը: Թանի վոր, ինչքան հեռանում ենք
պտտվող մարմնի առանցքից, այնքան արագությունն աճում է,
ապա, ըստ հարաբերականության մասնավոր տեսության, յեր-
կարության կրծառում տեղի պիտի ունենա, և պտտվող մարմնի
զանազան կետերում գանվող մասշտաբները տարբեր յերկարու-
թյուն պետք է ունենան: Ծիշտ նույն ձեռք ժամանակի չափն
ես, վոր կախում ունի արագությունից, պիտի փոխվի, յերբ հե-
ռանում ենք պտտման առանցքից: Ժամացույցը վորքան հեռա-
գոնվի պտտման առանցքից, այնքան դանդաղ պիտի շարժվի:
Թեպես այդպիսով մենք չափաղանց բարդ պատկերացում ենք
ստանում մետրական առնչությունների և ժամանակի մասին,
այնուամենայնիվ հարաբերականության ընդհանուր տեսությունը,
վոր շատերը հակված են բացասելու իր խիստ արհեստակա-
նության հետևանքով, վորոշ հնարավորություններ և ընձեռում
դիտողական ստուգման համար:

Եեթե արագացող շարժման մեջ գտնվող մարմինը լույս և
արձակում, ապա անշարժ դրության մեջ գտնվող դիտողի համար
այդ լույսի տառանումների թիվը վայրկյանի ընթացքում, ըստ
Դավթերի սկզբունքի, ավելի քիչ պետք է լինի, քան այն դեպ-

քում; յերբ մարմինը չի գտնվում արագացող ջարժման մեջ և հանգստանում ե, ճիշտ այնպես, ինչպես ձայնի հեռացող աղբյուրն ավելի ցած տոն ե տալիս, քան հանգիստ վիճակում գտնվող աղբյուրը ենթե արագացող ջարժման փոխարեն հանդես և դավա ծգողության ուժը, ապա նա պետք ե միևնույն ազդեցությունն ունենաւ Այնտեղ, ուր ծանրության ուժը շատ մեծ է, ինչպես, որինակ՝ արեգակի վրա, լույսի տատանումների թիվը մի վայրկյանում պետք ե ավելի քիչ լինի, քան այն տեղում, ուր ծանրության ուժը փոքր ե: Արեգակի վրա սպեկտրալ գծերը պետք ե տեղափոխվեն զեղի սպեկտրի կարմիր ծայրը, ընդ վորում այդ տեղափոխությունը ժամանակակից դիտողության միջոցներով հնարավոր ե հայտարկելու: Հարաբերականության ընդհանուր տեսության այս հետևողությունը պետք ե հասկանալ այն իմաստով, վոր ժամանակի չափումը կախում ունի ձգողությունից: Այն չափով, ինչ չափով տատանման վորեւելու թիվ արեգակի վրա փոքրանում ե վայրկյանի ընթացքում, այնտեղ պետք ե դանդաղի նաև ժամացույցի ընթացքը: Այստեղից ել կարելի յերրակացնել վոր լույսի արագությունն արեգակի վրա պետք ե համեմատաբար փոքր լինի, քանի վոր արագությունը հավասար է ճանապարհի յերկարությանը՝ բաժանած այն ժամանակի վրա, վոր գործադրվում ե այդ ճանապարհն անցնելու համար:

Լույսի արագության այս փոփոխությունն այն հետեանքն է ունենում, վոր լույսի ճառագայթն արեգակի մուտից անցնելիս բեկման ե յենթարկվում այնպես, ինչպես ոպտիկապես պակաս խիտ միջավայրից ավելի խիտ միջավայր անցնելիս:

Եեթե ընդունենք, վոր լույսի արագությունը կարող ե իրոք այդպիսի փոփոխության յենթարկվել ապա արեգակի մոտ ըստացվում ե լույսի ճառագայթի խոտորում, վոր հավասար է 0,83 աղեղնային վայրկյանի:

Իր նոր մաթեմատիկորեն ավելի լրիվ կերպով ձեւակերպված տեսության մեջ Ելնօտելնը լույսի ճառագայթի այդ խոտորման համար ստացել ե յերկու անգամ ավելի մեծ թիվ: Այդ փոփոխությունը բղինել ե այն նկատառումից, վոր ձգողությունն ազգում ե վոչ միայն ժամանակի, այլ և տարածության մետրական առնչությունների վրա:

Անգլիացի աստղաբաշխների կատարած դիտողություններն իրոք ցույց են տալիս, վոր արեգակի մոտ լույսի ճառագայթը բեկման յենթարկվում ե վորոշ, վորը համապատասխանում ե Ելնօտելնի տեսության տվյալներին: Զնայած տեսության այդ ակ-

ներև հաջողություններին՝ այնուամենայնիվ, նախ քան տեսուն թյան վերջնական հաստատման մասին խոսելը, պետք ե սպասել հետագա դիտողությունների արդյունքներին: Արեգակի մակերես վույժի վրա սպեկտրալ գծերի դեպի սպեկտրի կարմիր ծայրը տեղափոխվելու մասին ներկայումս մեծ տարածայնություններ կան: Այս ժամանակ, յերբ ամերիկացի աստղաբաշխները ժըմատում են այդպիսի տեղափոխության դոյությունը, յերկու դերամանացի գիտնականներ՝ Գրեբեն և Բաշեմ (Grebe և Bachem) հաստատում են այս: Մակայն, քանի վոր ամերիկացիներն անհամեմատ ավելի նողաստավոր պայմաններում են աշխատում, ապա այստեղ ել ավելի կարեռ և սպասել նոր դիտողությունների*: Գերմանական գիտության տրամիցիան և խստագույն քննադատության յենթարկել բոլոր գիտական արդյունքները, ուստի և յես պետք ե վաղաժամ համարեմ, այժմ, արգեն հաճախակի կրկնվող այն պնդումները, թե հարաբերականության տեսությունը վերջնականապես հաստատված է: Նա անպայման հաջողությունը գտել և մոլորակների պերինելիումի շարժման տեսության մեջ, վորն արդին վաղուց նկատված և Մերկուրի համար:

Յեթե հարաբերականության ընդհանուր տեսության յեզրակացություններին վիճակված ե իրոք հաստատվել փորձով, ապա գիտության համար նրա կատարած ծառայությունը հարկադրու կլինի շատ բարձր գնահատել: Բնության նոր որենքների հայտնագործումը, վորոնք վաղորոք նախատեսնված են յեղել տեսության կողմից, խոշոր հաղթանակ և հանդիսանում մարդկային մոքի տրամաբանության ուժի համար: Այստեղ հարցը վերաբերովում ե Փիզիկական յերեսույթների և ձգողության միջև յեղած առնչություններին: Իսկ ձգողությունը մինչև այժմ Փիզիկայի մյուս բաժինների հետ վոչ մի առընչությամբ կապված չի յեղել: Այս վերջին հանգամանքը, բացի վերը նշվածներից, կարող է հարաբերականության տեսությանը բոլորովին առանձնահատուկ նշանակություն տալ Փիզիկայի մեջ:

Ուստի, յեթե դատելու լինենք Փիզիկայի տեսակետից, հարաբերականության տեսության նշանակությունը հետեւյալն է:

Հարաբերականության մասնավոր տեսությունը հնարավորություն ե տալիս վորոշելու շարժման ազդեցությունն ամեն մի

* Թե վորքան զգույշ պետք ել լինել գիտողությունների արդյունքները քննահատելիս, այդ պարզգեց Վ. Կառավարի փորձերից, վորոնք հաստատում ելին ելեկտրոմագնիսական տեսությունը, այնինչ հետազայում կատարված բոլոր գիտողությունները համաձայն են: հարաբերականության տեսության հետ:

Փիղիկական յերևութիւն վրա: Հարաբերականության ընդհանուր տեսությունը նույն յնպանակով վորոշում և ծանրության ուժի ազդեցությունը:

Բայց, ինչպես հարաբերականության մասնավոր տեսության ազդեցությունը յերևան և գալիս միայն այն ժամանակ, յերբ սկսում են զործել շատ մեծ արագությունները, ճիշտ այդպես ել հարաբերականության ընդհանուր տեսությունը միայն այն ժամանակ և նկատելի ազդեցություն ունենում, յերբ զործ ունենք չափազանց մեծ մասսաների, ինչպես, որինակ՝ արեգակի ձգողության հետ:

Ուստի այս տեսության նշանակությունը Փիղիկայի համար սահմանափակ է, և հնարավոր կիրառությունների թիվը միշտ համեմատաբար փոքր կլինի:

Մյուս կողմից հարաբերականության ընդհանուր տեսությունն այն մեծ առավելությունն ունի տեսական ֆիզիկայի հիմունքների համար, վոր նա ծանր և իներտ մասսայի հավասարության վաղուց արդեն հայտնի փաստը դիտում և վորպես բնության անհրաժեշտ որենք, մինչեռ, նախ քան այդ, այս փորձնական իրողությունը ամենակին տեղ չեր գտնում բնության որենքների մեջ։ Հարաբերականության տեսությունն արտահայտվում և զուտ մաթեմատիկական և ընդհանուր ձևով։ Բնության որենքների արտահայտությունը չպետք և փոխավի մի քանի վորոշ մաթեմատիկական գործողությունների ժամանակ։

Հարաբերականության մասնավոր տեսության մեջ, արդեն, ժամանակը դիտվում և վորպես տարածության չորրորդ չափումը։ Այսուհետեւ այն շարադրելու համար մեծ չափավորությունը կլիմա և սկսեց վորոշ դեր խաղալ, այնինչ չորրորդ չափումն ուրիշ բան չե, բայց յեթե պարզապես մաթեմատիկական մի հարմար պրիզմ։ Ճիշտ այդպես ել վոչ եվկլիդյան յերկրաչափության կիրառումը պետք և դիտել միայն վորպես մաթեմատիկական շարարադրության մի յեղանակ։ Խիմիական ժամանակից սկսած մաթեմատիկորեն ապացուցված է, վոր տրամաբանորեն մտածելի յեն այնպիսի յերկրաչափություններ, վորոնց մեջ գոյություն ունեն սովորական յերկրաչափության որենքներից տարբեր որենքներ։ Այդպիսի յերկրաչափությունների հնարավորությունը յերևան

Իմացության տեսության տեսակետից շարադրման նման յեղանակներին չափազանց մեծ նշանակություն և տրվում։ Չորրորդ չափման միատիկան, հարաբերականության տեսությունը քննարկելիս ևս, սկսեց վորոշ դեր խաղալ, այնինչ չորրորդ չափումն ուրիշ բան չե, բայց յեթե պարզապես մաթեմատիկական մի հարմար պրիզմ։ Ճիշտ այդպես ել վոչ եվկլիդյան յերկրաչափության կիրառումը պետք և դիտել միայն վորպես մաթեմատիկական շարարադրության մի յեղանակ։ Խիմիական ժամանակից սկսած մաթեմատիկորեն ապացուցված է, վոր տրամաբանորեն մտածելի յեն այնպիսի յերկրաչափություններ, վորոնց մեջ գոյություն ունեն սովորական յերկրաչափության որենքներից տարբեր որենքներ։ Այդպիսի յերկրաչափությունների հնարավորությունը յերևան

յեկավ այն բանից հետո, յերբ վոչ մի կերպ կարելի չեղավ ապացուցել վոր յեռանկյան յերեք անկյունների դումարը հավասար ե յերկու ուղիղ անկյան Այդ բանը մենք սովորել ենք դպրոցում, բայց ապացուցել այդ հնարավոր չե: Այդ թեորիմը հնարավոր չե ապացուցել այն պատճառով, վոր տրամարանորեն հնարավոր և կառուցել այնպիսի յերկրաշափություններ, ուր յեռանկյան յերեք անկյունների գումարը հավասար չե յերկու ուղիղ անկյան Յերբ այդպիսով մի անդամ արդեն ապացուցված եր վահ եվկլիպտյան յերկրաշափության տրամարանական հնարավորությունը, ապա դրանից հետո այդ ճանապարհով կարելի յեր և ավելի հեռուն դնար:

Այն յերկրաշափությունը, վորի համար յեռանկյան յերեք անկյունների գումարը մեծ ե յերկու ուղիղ անկյունից, կոչվեց սփերիկ յերկրաշափություն, վորովհետեւ նրա մեջ ուղիղ գծերը փակվում են իրենք իրենց մեջ՝ գնդային մակերևույթի վրա տարաված մեծ շրջանների նման: Վոչ եվկլիպտյան յերկրաշափության ոգնությամբ տիեզերքը վերջավոր չափերի մեջ ընդգրկելու հնարավորությունը հայտնի յեր գեռ Բերնիարդ Ռիմանին: Նորագործ աստղաբաշխները հաճախ են խոսում այդ յերկրաշափության մասին, բայց այսանդ հարց և ծագում, թե իրենք անհրաժեշտ և զոհաբերել յերկրաշափության պարզ հիմունքները:

Եյնշտեյնը հենց ինքը փորձեց ապացուցել, վոր յեթե մասսաների ձգողության որենքը կիրառվի ամբողջ տիեզերքի նկատմամբ, ապա հարաբերականության տեսությունը, վոր ողտվում ե վոչ եվկլիպտյան յերկրաշափությամբ, առավելություն և ներկայացնում մինչ այդ գոյություն ունեցող մեխանիկայի նկատմամբ: Արդեն վաղուց հայտնի յե, վոր հավասարաշափ խտությամբ ամբողջ տիեզերքը լցնող նյութի գաղափարն անհամատեղելի յե նյութներն ամբողջ ական ձգողության որենքի հետո:

Ընդհակառակը, պետք ե յենթագրել, վոր մի վորոշ միջին կետից սկսած նյութի խտությունը գնալով նվազում ե, և այդ նվազումն, ամենաքիչը, հակադարձ համեմատական և հեռացման քառակուսուն: Այդպիսով տարածությունը, կարծեք, թե ավելի ու ավելի դատարկ և դառնում: Իմացության տեսության տեսակետով, այս դժվարությունից կարելի կլիներ խուսափել, յեթե ընդունեյինք վոչ եվկլիպտյան սֆերիկ յերկրաշափությունը, վորի մեջ ուղիղ գընծերը փակվում են իրենք իրենց մեջ: Այդպիսի տարածությունը վերջավոր և իսկ հարաբերականության տեսությունն այն առավելությունը կունենար, վոր նա առանց այդ ել արդեն հետեւցնում և վոչ եվկլիպտյան յերկրաշափությունը, այնպես վոր սփե-

ըիկ յերկրաչափությունն ինքնաբերաբար ծնուռնդ և առնուռմ նըր-ըանից, և անսահման տարածությունն անհամատեղելի յենրա հետ:

Բայց այնուամենայնիվ այս բոլոր դատողությունների մեջ շատ զգուշավոր պետք եւ լինել:

Հարաբերականության ընդհանուր տեսության մաթեմատիկական ձեռն այնպիսին ե, վոր հնարավոր չե խստիվ և միանիշ կերպով վորոշել թե ինչ են ցանկանում հասկանալ այդ տեսության տակ: Հարաբերականության տեսությունը ներկայացնում է մի շարք մաթեմատիկական հավասարությունների սխալեմ, վորոնք չեն փոխվում մաթեմատիկական վորոշ ձևափոխությունների ժամանակ և վորոնց ոգնությամբ պետք ե նկարագրվեն բնության շրջելի կերպով գործող որենքների հատկությունները:

Կրեցնանը պահանջ եր առաջազրում, վորպեսզի հարաբերականությունը վոր արտահայտվում և այդ ձևափոխությունների անկախության մեջ, յերևան դա ամեն մի բանաձեռ մեջ, վոր ընության վորեւ որենքն ե արտահայտում. այնինչ այդ հնարավոր և միայն հարաբերականության ընդհանուր տեսության մեջ: Ուստի և Կրեցնանը Եյնօտելի հարաբերականության ընդհանուր տեսությունն անվանում ե բացարձակ տեսություն: Սրանից հետեւ տեսում ե, վոր ինչին մենք ցանկանում ենք հարաբերական տեսություն անունը տալ կարելի յե և այլ կերպ անվանելի Կարող կլինի արդյոք հարաբերականության ընդհանուր տեսությունը բավարարել Կրեցնանի պահանջին, այդ զեռ հարց եւ Հարաբերականության մասնավոր տեսությունը բավարարում է այդ պահանջին:

Հարաբերականության ընդհանուր տեսության հիմունքներն Այնօտելի հետեւյալ ձևով ե արտահայտում.

1) Հարաբերականության սկզբունքը, բնության որենքների մաթեմատիկական արտահայտություններն անփոփոխ են մնում վորոշ մաթեմատիկական ձևափոխությունների ժամանակ:

2) Իներցիան և ծանրությունը, իրենց եյությամբ, նույն բանն են ներկայացնում (այսպես կոչված հարաբերականության ընդհանուր տեսության հիմնական որենքը), այնուհետեւ՝ տարածության մետրական առընչությունները, իներցիայի ազդեցությունը և ծանրության ուժը պայմանավորվում են տարածության միենույն վիճակով:

3) Այդ վիճակը վորոշվում է միայն տարածության մեջ դըտնվող մաքմինների մասամբներով:

Սրանից մենք տեսնում ենք, Եյնշտեյնի տեսության մեջ ավելի

շատ բան և պարունակվում, քան միայն հարաբերականության պահանջի մեջ: Բայց մինչև անգամ այս յեղանակով ել տեսության հավասարութիւնի սխանմը դեռ ամբողջովին չի վորոշվում: Ինքն Եյնշտեյնը իր հավասարութիւնի ավելացրեց մի նոր հավելյալ անգամ, վոր անփոփոխ և թողնում հարաբերականության պահանջը, բայց միաժամանակ թույլ և տալիս ընթունել նյութի վերջավոր քանակի գոյություն, վոր կազմում և տիեզերքը և պարփակվում և սփերիկ տարածության մեջ:

Այստեղից արդեն հետևում ե, վոր հարաբերականության ընդհանությունն ոժաված չե այնպիսի կատարելությամբ ինչպիսին հատուկ ե հարաբերականության մասնավոր տեսությանը, վորի մեջ վոչ մի բան փոխել հնարավոր չե և վոր պետք է կամ ընդունել կամ բացասել Այդ ավելի պարզ կդառնա, յեթե հիշենք հարաբերականության տեսության հետագա զարգացումը, ինչպես այդ հասկանում ե, որինակ, Վեյլ (Weyl): Մինչդեռ Եյնշտեյնի մոտ յերկրաչափությունը, ժամանակը, իներցիայի և ծանրության աղբեցությունը մի ամբողջության մեջ միացած սխառեմ են ներկայացնում, Վեյլը նրանց ավելացնում ե նաև ելեկտրոմագնիսական յերեղույթները: Վեյլի տեսությունը համեմատաբար ավելի կատարյալ սխառեմ կարելի յե համարել, քան Եյնշտեյնի տեսությունը:

Իհարկե Վեյլի մոտ յերկրաչափությունն ել ավելի յե բարդանում, և պետք ե ասել, վոր այս տեսությունների համար, վերջիւ վերջո, բնորոշ ե այն, վոր նրանք բնության որենքները շարադրելիս հանդիպած դժվարությունները փոխադրում են յերկրաչափության բնագավառը: Մենք կարող ենք, կատարելապես վըստահ լինելով հաջողության մասին, ընդունել վոր բավական բարյու յերկրաչափության ոգնությամբ միշտ կարելի յե նկարագրել ըստը այն փաստերը, վորոնք կարող են ստացվել դիտողությունից: Միայն այդ մի այնպիսի նկարագրություն կլինի, վորի ժամանակ մենք նորից գեն ենք նետելու հին յերկրաչափության մեծ պարզությունը և ամեն անգամ նորից և ավելի մեծ իրավունքով պիտի ծագի միևնույն հարցը, թե իրոք անհրաժեշտ ե, վոր մենք այդ ձևով գեն շպրտենք բնության յերեսույթների հետազոտման յեղանակների այդ պարզագույն հիմունքները:

Եեթե մենք քննադատորեն ենք մոտենում ամբողջ հարաբերականության տեսությանը, ապա ամենից առաջ պետք ե սահմանենք այն պահանջները, վորոնց պետք ե բավարարի մի այլպիսի տեսություն: Այդ պահանջները հետազոտման վետք ե լինեն:

1) Տեսությունը վորպես յելակետ պետք ե ունենա միայն մի պատուլատ:

2) Տեսությունը պետք ե աղատ լինի տրամաբանական հակառակություններից:

3) Նրա յեղակացությունները պետք ե համաձայն լինեն փորձական տվյալների հետ:

4) Տեսությունը պետք ե պարզ լինի:

Առաջին պայմանը հարաբերականության մասնավոր տեսության կողմից իրագործվում ե, ավելացնելով լույսի արագության մեջնությունը: Բայց, ինչպես մենք տեսանք այդ պայմանը չեն իրականանում հարաբերականության ընդհանուր տեսության մեջ:

Ենթադրենի ընդհանուր տեսության հիմքում, ինչպես տեսանք, մի քանի պաստուլատներ են զբաժան:

Նրանցից բացի, հնարավոր են և ուրիշ պոստուլատներ: Ներկայումս դեռ չեն կարելի ընտրություն կատարել այդ տարրեր հնարավորությունների միջև:

Ինչ վերաբերում ե յերկրորդ պահանջին, ապա յես կարծում եմ, վոր յերկու տեսությունների մեջ ևս նա իրականացած ե: Հենց այն հանդամանքը, վոր հարաբերականության տեսությունը կարելի յե շարադրել մաթեմատիկոսների կողմից կատարելապես մշակված վոչ եվկլիույան յերկրաչափության սիստեմի և կռվատիանուների տեսության ոգնությամբ, բավարար յերաշխիք ե, վոր նրա մեջ զոյություն չունեն ներքին տրամաբանական հակառակություններ:

Ինձ թվում ե վոր հարաբերականության ընդհանուր տեսության հակառակորդները՝ նրա դեմ տրամաբանական առարկություններ հարուցելու իրենց փորձերի ժամանակ՝ բավարար չափով զանազանություն չեն դնում ֆիզիկական տեսության և նրա մաթեմատիկական ձևի միջև:

Ինչ վերաբերում ե, յերկրորդ պահանջի իրականացմանը, այսինքն այն բանին, վոր դիտողությունները և տեսության յեղակացությունները համապատասխան են իրար, ապա այդ մասին, ինչպես ասացինք, դեռ հնարավոր չե վերջնական խոսք ասել:

Մենք այժմ գալիս ենք չորրորդ պահանջին, այն և տեսության պարզության պահանջին:

Ցես կարծում եմ, վոր հարաբերականության տեսությանը ցույց տրվող թշնամական վերաբերմունքը, ըստ եյության վճռառանց վորոշ հիմքի, բայց մեծ մասամբ անդիտակցաբար, բզիսում ե այն բանից, վոր այդ տեսությունը չափազանց բարդ և թվում

և չափազանց շատ և ոգտվում կատարելապես վերացական պատ-
կերացումներով:

Դեռ ևս հարաբերականության մասնավոր տեսությունը, ըն-
դունելով, վոր յերկարության և ժամանակի չափերը պեսաք և կախ-
ման մեջ դանվեն շարժումից, այնպիսի վերացականություն, և
մտցնում, վոր Փիղիկական մտածողության սրտովը չեւ Այն հան-
գամանքը, վոր յերկու արագություններ պարզապես չեն կարող
գումարվել, նույնպես չի նպաստում ամբողջ տեսության պար-
զությանը: Իսկ հարաբերականության ընդհանուր տեսությունը
պատկանում է, ընդհանրապես, ամբողջ մաթեմատիկայի ամենա-
վերացական բաժինների թվին, և միանդամայն ընականորեն
հարց ե ծագում, թե իսկապես մենք ստիպված ենք հրաժարվելու
հին, պարզ յերկրաչափությունը վորպես Փիղիկայի հիմք ընդու-
նելուց և անցնելու այնպիսի գատողությունների, վորոնք մաթե-
մատիկորեն, իհարկե անաղարս են, բայց վորոնք Փիղիկան դնում
ե յերերուն հողի վրա:

Վորքան մաթեմատիկայի համար դժվար չեւ կամայական կեր-
պով ընդհանրացնել յերկրաչափությունը, քանի վոր դրա համար
նա միայն պետք և արամարտնությամբ ղեկավարվի, այնքան
դժվար է Փիղիկայի համար փոփոխել իր գիտության պարզ հի-
մունքները, վորովհետեւ այդ անելիս նրան սպառնում են նորա-
նոր փոփոխություններ: Սակայն, յեթի հարաբերականության
տեսության յեզրակացություններին վիճակված և հաստատվել
ապա այդ տեսության նշանակությունը միշտ մեծ կլինի: Կիսը-
ձեն պարզել այն, վորքան այդ հնարավոր ե, և այդ անելիս՝ անց-
նել նրա նոր հասկացողության և շարադրման նոր յեղանակների:

Բայց մենք դեռ պետք ե շոշափենք մի տեսական - իմացական
ընույթի մոլորություն ևս, վոր վերջին ժամանակներս և առաջ
յեկել և վորի շնորհիք ավելի լայն շրջաններում կարող են թյու-
րիմացություններ ծագել:

Պնդում են, թե հարաբերականության ընդհանուր տեսությունը
ցույց ե տալիս, վոր աշխարհի Կոպենիկան սիստեմի բոլոր ապա-
ցույցներն անբավարար են և վոր նույնպիսի հաջողությամբ կա-
րելի յեւ ընդունել և Պտղոմեոսյան սիստեմը: Ցես կուղենայի հարց
տալ վորևեմ մաթեմաթիկոսի, աստղաբաշխի կամ Փիղիկոսի, լինի
նա հարաբերականության տեսության ջատագով կամ վոչ, թե
արդյոք նա լրջորեն կարող է մտածել վոր յերբ և և նորից կա-
րելի կլինի ասել, թե յերկիրը գտնվում է հանգիստ վիճակում, և
արեգակը պտտվում է նրա շուրջը:

Կանդնելով իմացության տեսության տեսակետի վրա, մենք կարո՞ղ ենք բաժանել տրամարանորեն հնարավորն ու ապացուցելին իրականությունից: Զուտ տրամարանորեն ընդհանրապես կարելի յէ բացասիլ արտաքին աշխարհի գոյությունը, համենայնդեպս նրա գոյությունն ապացուցել տրամարանորեն անհնար ե: Չնայած այլ հանգամանքին, ամեն մարդ հավատում է արտաքին աշխարհի գոյությանը և ավելի շատ, քան վորեն տրամարանական յնդրակացության: Սակայն, յիթե տրամարանորեն Պտղոմեոսի յիշ Կոպենիկի սիստեմները հավասարապես թույլատրելի յին, ապա, համենայն դեպս, կա մի հանգամանք, վոր վճռականորեն խոսում և Կոպենիկյան սիստեմի ոգտին, այդ նրա պարզությունն ե:

Այն ժամանակ, յերբ Կոպենիկը հաստատեց իր սիստեմը՝ դեռ հայտնի չեյին այն փորձերը (Ֆուկոյի ճոճանակը և այլն), վորոնք հետազոյում համարվում եյին յերկրի պտտման ապացույցները: Միայն Կոպենիկը ցույց տվեց, վոր յերկնային մարմինների ճանապարհները նշանակալից չափով ավելի պարզ կդառնան, յեթե ընդունենք, վոր յերկիրը պտտվում ե: Ինչպես հայտնի յէ, դեռ հին Հունաստանում Արիստարխը սովորեցնում եր, վոր յերկիրը պտտվում ե արեկի շուրջը: Իր «Արեմուտքի կործանումը» («Der Untergang des Asendlandes») հայտնի գրքի մեջ Շպենդլերն ասում ե, վոր այս տեսակետը հույնների մոտ ընդունելություն չգտավ այն պատճառով, վորովհետև նա չեր համապատասխանում հունական կուլտուրայի տեսակետից: Իսկ իմ կարծիքով՝ դրա պատճառն այն եր, վոր այդ ժամանակ դեռ հնարավոր չեր տեսնել այն հսկայական առավելությունները, վորոնք կապված են այդ տեսակետի հետ: Յերեք հարյուր արքի անցնելուց հետո միայն Պտղոմեոսը սահմանեց իր աշխարհի սիստեմը, և դեռ չափազնց շատ մանրակրկիտ աստղաբաշխական աշխատանքները կավոր յեղավ կատարել մինչև վոր վերջապես հնարավոր դարձալ յերկու սիստեմների համեմատությունը:

Կոպենիկի սիստեմի մեջ վճռական մոմենտ հանդիսացավ այն, վոր նա ցույց տվեց, թե ինչպես մոլորակների հետազծերի Պըտղոմեոսյան խճճված եպիցիկլերը պարզվում են, յերբ ընդունում ենք, վոր յերկիրը պտտվում ե: Այս բանում հարաբերականության տեսությունը, անշուշտ, վճռապես վոչինչ չի փոխում:

Կոպենիկյան տեսության վճռական նշանակությունն այն ե, վոր նա վերջ դրեց մինչ այդ տիրող այն համոզմանը, թե մարդկանցով բնակված յերկիրը տիեզերքի կենտրոնն ե կազմում: Այս

տեսության աղդեցությունը մարդու աշխարհայեցողության վրա հսկայական եր, վորովճետն նրա զիրքը տիեզերքի նկատմամբ արմատապես փոխվեց: Բնականաբար միանգամայն անհնար է, և դրա հետ համաձայն կլինի հարաբերականության տեսության ամեն մի կողմանակից, վորպեսզի մարդկությունը նորից վերապառնա այն բանին, ինչ գոյություն ուներ մինչ Կոպեռնիկը:

Հարաբերականության տեսությունը պնդում է, վոր արամարանորեն հնարավոր և յեղակացնել նաև ամրոջ աշխարհի պառյաը յերկրագնդի շուրջը: Այս յենթագրությունը տպացուցելու համար տեսությունը պետք և ցույց տա, վոր յերկրի պառյաքի հետեանքով առաջացող կենարոնախույս և նման ուժերը կարող են առաջանալ նաև յերկնային մարմինների ներգործության հետեանքով: Բայց այս հնարավորությունը, վորից թույլատրելի յեն համապատասխան ֆիզիկական յեղակացություններ անելու ուսալ նշանակություն չունի, քանի վոր Կոպեռնիկի սեսանմի պարզությունը՝ միայն այդ սխալեան և պիտանի դարձնում բնության հանաչողության համար մարդու կողմից:

Ուստի չի կարելի համաձայնվել այն մտքի հետ, թե հարաբերականության տեսությունը կարող է նոր աշխարհը մը բռնում ըստեղծել: Հարաբերականության տեսությունը, յեթե նրան վիճակվի հաստատվել փորձով, միայն այն չափով վորեն կապ ունի աշխարհը բռնման հետ, վոր չափով նրան կհաջողվի հարստացնել մեր ֆիզիկական զիտելիքները: Բանի վոր նա, այլ մեթոդների հետ, հաջողությամբ ուգուվում և նաև տեսական ֆիզիկայի մեթոդներով, ապա նա կարող է աղջկել աշխարհը բռնման վրա միայն չափով, վոր չափով այդ ընդհանրապես հնարավոր է ֆիզիկայի համար: Յեթե հաճախ խոսվում և ուղարկվիսական (հարաբերական) աշխարհը բռնման մասին, վոր կապ ունի Շպենգլերի կողմից իր «Արևմուտքի կործանումը» գրքում պաշտպանած աշխարհականուման հետ, ապա պետք է վճռականապես առարկել այն բանի դեմ, թե վերջինը վորեն ընդհանուր բան կարող է ունենալ հարաբերականության ֆիզիկական տեսության հետ:

Ֆիզիկայի որենքներն ընդհանրացնելու և այդ որենքներն ուսար բնագավառներ փոխադրելու ձգտումն առաջին անգամը չե, վոր սխալ յեղակացությունների յեն հանգեցնում մարդկանց: Յերբ Մաովերտյուին (Maurerius) գտավ ամենափոքը աղղեցության որենքը, նա մտածեց, թե իրեն հաջողվել է բնույթան ինչ կոր առանձնահատուկ աստվածաբանական որենք հայտնագործել Յեկ Յակոբին եր, վոր ամենափոքը աղդեցության սկզբունքից

վատարեց այդ բոլոր մետաֆիզիկական մակարերությունները և պարզ կերպով ցույց տվեց, վոր այստեղ խոսք կարող ե լինել միայն մեխանիկայի որենքների զուտ մաթեմատիկական ձևակերպման մասին ձիչտ այդպես ել հարաբերականութան տեսությունն այլ բան չե, բայց յեթե այն հատկությունների նկարագրության մաթեմատիկական մի յեղանակ, վորոնք վերաբերվում են ընության որենքներին: Յեթե ամենափոքր ազդեցության սկզբունքից չի կարելի վորուել յեղակացություն հանել բընության ինչ վոր մետաֆիզիկական առանձնահատուկ նպատակների մասին, ապա հավասարապես հարաբերականության սկզբունքից ևս մենք չենք կարող մի այնպիսի յեղակացություն հանել, վոր դուքս և դալիս ֆիզիկապես գոյություն ունեցող իրերի սահմաններից:

Հարաբերականության տեսությունն ուրիշ բան չե, բայց յեթե տեսական ֆիզիկայի մի մաթեմատիկական սիստեմ, վորից բղխում են ֆիզիկական նշանակություն ունեցող և փորձի միջնորդում ստուգման յենթակա հետևություններ: Յեկ այս իրազությունը չի փոխվում այն հանգամանքով, վոր հարաբերականության սկզբունքն ինքը ծագում ե իմացության տեսությունից:

Հարաբերականության տեսությունն ինքնըստիքյան ֆիզիկական տեսությունն ե: Արդեն հարաբերականության մասնավոր տեսության մեջ բացարձակ շարժում գիտելու անկարելիության պահանջի հետ միասին մենք կարիք ունենք ընդունելու նաև լույսի արագության մեայնությունը (վոր հարաբերականության ընդհանուր տեսության մեջ նորից անպետք ե դառնում): Հարաբերականության ընդհանուր տեսությունը զիջֆերենցիալ հավասարությունների մի սիստեմ ե հանդիսանում ձիչտ այնպես, ինչ-պես մեխանիկական կամ եկեղեցումագնիսական տեսությունը:

Ուստի հարաբերականության տեսության գեմ միայն յերեք տեսակի իրական առարկություններ կարող են լինել, կամ մենք պետք ե հակասություն գտնենք տեսության մաթեմատիկական սիստեմի մեջ, իամ պետք ե ցույց տանք, վոր նա հանգում է փորձով չարդարացող յեղակացությունների, կամ, վերջապես, մենք պետք ե ապացուցենք, վոր նա պիտանի չե ընության յերեսույթների վերջնական նկարագրության համար, շնորհիվ այն բանի, վոր հրաժարվում ե մեր ամենապարզ հիմնական որենքներից:

Տեսական-իմացողական ընույթ կը ող բազմաթիվ առարկություններ, վորոնք մինչև այժմ հարուցվել են և այժմ ել շարու-

նակում են հարուցվել հարաբերականության տեսության դեմ՝
այդ տեսությանը վոչնչով չեն դիպչում, այնքան, վարքան նա
ֆիզիկական տեսություն և Միայն ֆիզիկան ե, վոր կարող է
վորոշել թե ճիշտ և արդյոք նաև և նպաստմամ և արդյոք աշխարհի
յասին ֆիզիկական պատկերացում սահեղեկուն:

Չափազանց կարող և հարաբերականության ֆիզիկական տե-
սությունը բաժանել իր մաթեմատիկական ձեից, Վերջինս, վոր
իմաստ մեծ չափով գրավել և մաթեմատիկոսների ուշադրությունը,
պահպանում և իր նշանակությունը վորպես չորս չափում ունե-
ցող վոչ եվկլիպյան յերկրաչափության համելվածն ու զարգա-
ցումը, նույնիսկ և այն դեպքում, յեթե ֆիզիկական տեսությունը
դադարի ճիշտ համարվելուց կամ եյտական փոփոխությունների
յենթարկվի:

Սակայն վտանգ գոյություն ունի, վոր այն մարդիկ, վորոնք
բավարար չափով չգիտեն հարաբերականության իսկական ֆիզի-
կական տեսությունը, կծագեն նրանից ավելի նշանակալից հե-
տեւություններ անել և փորձել արտածել նրանից մեր մտածողու-
թյան հարաբերականության ընդհանուր տեսությունը: Դրանով
մենք վերագրած կրիսեյինք այն բանին, ինչ զոյություն ուներ
մեզնից յերկու հազար տարի առաջ, այն և հունական սովորու-
թյանը: Բոլոր զատողությունների հարաբերականությունը սովո-
րեցնում եր զեռ Պրօտագորը, վոր, վերջի վերջո հանդից այն զուտ
սովորության տեսակետին, թե կարելի յե հավասարապես լավ
պաշտպանել ինչպես վորեւ դրույթ, այնպես և նրա հակառակու-
թյունը: Դրա համար հարկավոր և միայն կանգնել համապաս-
խան տեսակի վրա: Յես չգիտեմ, թե ցանկալի՞ յե արդյոք ժա-
մանակակից ոելատելիստական տեսակետներից պաշտպանների հա-
յար այդքան հեռու գնալ: Բայց մի բան ստույգ ե, վոր նման կա-
ռուցվածքներն ուղղակի հակասում և ֆիզիկական մատենակեր-
պին: Մտածող ֆիզիկոսներից իրենց հոգեկան ուժերի մեծագույն
լարման միջոցով աստիճանաբար կարողացան հասնել այն բանին,
վոր մարդիկ հրաժարվեցին գեցցենարիկ և անտրոպոմորֆիկ տե-
սակետներից: Կարելի յե ասեմ վոր ներկայում ֆիզիկական
մտածողության հիմնական ձգտումն և վտարել ֆիզիկայից մարդու
սուրյեկտիվ պատկերացումները և անցնել ընության անվոփոխ
և դիտողության մարդկային յեղանակներից անկախ որենքներին:
Ճշմարիտ ե, բնության որենքների իմացության համար մեզ բա-
նականություն և պետք, այսինքն, այնուամենայնիվ մի մարդկա-
յին հատկություն:

Սակայն դիտողությունների ֆիզիկական յեղանակների հաշողությունների հետ միասին պարզ ե դարձել վոր բնության որենքներից ըզնող տրամարանական յեղակացությունները և իրավես դոյլություն ունեցողն այնքան համապատասխանում են իրար, վոր բնության որյեկտիվ ճանաչողությունը հնարավոր ե դառնում: Հոգեբանական որենքները, վորոնք, վերջի վերջո, դարձյալ բնության որենքներն են, այնպես են, վոր տրամբանության և բնության մեջ դոյլություն ունեցող իրականության միջն տիրում ե համաձայնություն: Յեթև մենք դրանից հրաժարվենք և նորից վերադառնանք իմացության հարաբերականության սովորական ըմբռնմանը, ապա դրանով իսկ մենք կտրված կլինենք ֆիզիկական մտածողության հողից: Ուստի ամենից առաջ ֆիզիկունները պետք ե առարկեն այն բանի դեմ, վոր ֆիզիկական հարաբերականության տեսությունը, վոր, կարող ե պատահել, ձիգու կերպով տալիս և բնության որենքների վորոշ հատկությունները, սխալմամբ ընդհանրացվի մինչև իմացողության հարաբերականությանը, մի հանգամանք, վոր կործանում և բնության ֆիզիկական իմացության ամրող շենքը և դրանով իսկ, ամենից առաջ, նաև հարաբերականության տեսության հիմունքները:

Այն ընդհանուր հետաքրքրությունը, վոր զարթեցրել ե դեպի ինքը հարաբերականության տեսությունը, իմկարծիքով ուղղված չե բացառապես դեպի այնտեղ, ուր այդ տեսությունն իրոք կարող եր արժեք ունենալ, յեթև նրա յեզրակացությունները հաստատավեցին: Յեվ վորքան ել լավ լիներ ուրախանալ այն մեծ ուշադրության և հետաքրքրության համար, վոր զարթեցրել և դեպի ինքը ֆիզիկայի բաժիններից մեկը, այնուամենայնիվ չի կարելի չվախենալ, վոր հարաբերականության տեսության ֆիզիկական և զուտ գիտական զաղափարները չեն միայն, վոր զբաղեցնում են մաքերն ու զգացումները:

Յես չեմ կարող վորոշ չափով չկասկածել այն մասին, վոր ֆիզիկայի համար խիստ կարենոր այն հարցը, թե լույսի ճառագայթը խոտորվում է արեգակի ձգողության ազդեցության տակ, կամ սպեկտրալ զծերը տեղափոխվում են, ընդունակ լինել միայնակ այդպիսի մեծ հետաքրքրություն առաջացնելու: Յես վախենում եմ, թե ինչ վոր անորոշ և զգացումներով սնվող սպասումներ են, վորոնք ավելի շուտ պատճառ են հանդիսանում այն բանի, վոր հարաբերականության սկզբունքի մասին այնքան շատ և խոսվում հասարակական ժողովներում, և վոր նրա մասին այնքան շատ կատարյալ հիմարաբանություն և տպվում և խոսվում:

Յեղ ինչքան ել ցանկալի լինի, վոր գիտական յեղակացու-
թյունները, յեթև նրանց ճշտությունն ապացուցված և արդեն,
լայն չափով ծավալվեն և հայտնի դառնան մարդկանց ավելի մեծ
շրջանի, այնուամենայնիվ յես անկեղծորեն պետք և խոստավա-
նեմ, վոր հարաբերականության տեսության համար այդ ժամա-
նակը դեռ չի հասել վոչ տեսությունն ինքը և վոչ նրա յեղա-
կացությունները զեռ փորձով հաստատված չեն վերջնականապես:
Եղափել այն ամենը, ինչ թեր կամ դեմ խոսվում և հարաբերա-
կանության տեսության մասին, հնարավոր չե այստեղ, վորով-
հետև դրա համար չափազանց մեծ մասնադիտական գիտելիքներ
են պետք: Ել ավելի մեծ չափով, քան Պլատոնյան դպրոցի հա-
մար, ճիշտ և հետևյալ դարձվածքը հարաբերականության տեսու-
թյան նկատմամբ.

Մշտեւ աղեամետրիտօս և աւատական:

Վոչ մաթեմատիկոսների մուտքն արգելված է:



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0001988



ԳԻՒԾ ՅԵ ԿՈՊ.

074.



17.

A 24329